ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» նոյեմբերի 2012թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 605-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Երևան համայնքի և «Ար-Պե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2012 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված «Անշարժ գույքի նվիրատվության» և Երևան համայնքի և Արամ Իսաբեկյանի միջև 2012 թվականի նոյեմբերի 5-ին կնքված «Նվիրաբերության մասին» պայմանագրերը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել «Ար-Պե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտայի հ.59/7 շենքի հ.5 և հ.6 բնակարանները:

2. Որպես նվիրաբերություն ընդունել Արամ Իսաբեկյանի կողմից Երևան համայնքին նվիրաբերված Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի թվով 28 գեղանկարչական աշխատանքները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2012 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված «Անշարժ գույքի նվիրատվության» պայմանագրերի համաձայն՝ «Ար-Պե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Երևան համայնքի սեփականությանն անհատույց հանձնվել է ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտայի հ.59/7 շենքի հ.5 և հ.6 բնակարանները համապատասխանաբար՝ 111.5 (հարյուր տասնմեկ ամբողջ հինգ տասնորդական) քմ և 77.9 (յոթանասունյոթ ամբողջ ինը տասնորդական) քմ մակերեսներով։

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի ունեցած մեծ ավանդը հայ գեղանկարչության զարգացման գործում և նրա ստեղծագործությունները հանրությանը ներկայացնելու մատչելիությունն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետի 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Էդուարդ Իսաբեկյանի գեղանկարների մշտական գործող ցուցահանդես կազմակերպելու մասին» հ.2495-Ա որոշմամբ «Հայ-Արտ» մշակութային կենտրոնի առաջին հարթակում կազմակերպվել է Էդուարդ Իսաբեկյանի նկարների մշտական գործող ցուցահանդես։

2012 թվականի նոյեմբերի 5-ին Երևան համայնքի և Արամ Իսաբեկյանի միջև կնքված «Նվիրաբերության մասին» պայմանագրի համաձայն՝ Արամ Իսաբեկյանը Երևան համայնքին է նվիրաբերել Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի թվով 28 գեղանկարչական աշխատանքները՝ ք.Երևան, Մաշտոցի 7ա հասցեում գտնվող «Հայ-Արտ» մշակութային կենտրոնի առաջին հարթակում մշտական գործող Էդուարդ Իսաբեկյանի գեղանկարների ցուցահանդեսում ցուցադրելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այլ ցուցասրահներում ժամանակավոր ցուցադրելու համար։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից։ Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված, իսկ 605-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն նվիրաբերություններ կարող են արվել քաղաքացիներին, բուժական, դաստիարակչական հիմնարկներին, սոցիալական պաշտպանության ու նույնանման այլ հաստատություններին, բարեգործական, գիտական և ուսումնական հաստատություններին, հիմնադրամներին, թանգարաններին ու մշակույթի այլ

հաստատություններին, հասարակական և կրոնական կազմակերպություններին, ինչպես նաև պետությանն ու համայնքներին:

Ուստի անհրաժեշտություն է առաջացել կայացնել Երևան քաղաքի ավագանու որոշում՝ նվերներն ընդունելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ